

**ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԽՈՒՄՔՆ ԸՆԴԴԵՄ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԳՈՐԾՈՎ  
ՎՃՈՒԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի  
ՎՃՈՒԻ**

2005թ. դեկտեմբեր  
»ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ« ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն արվել են «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության համար Արայիկ Ղազարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ: Վերլուծության մշակմանն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության և Նյուսիսային Իռլանդիայի դեսպանատունը:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակինը և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության տեսակետների հետ:

Ռիստմնասիրությունն իրականացվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

. 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
1. Զրպարտության և վիրավորանքի փաստերով ԵԴ-ի վճիռները.....	5
2 Պատասխանող կողմ հանդիսացող երկրի նկարագիրը որպես ԵՆ անդամ.....	7
3. Բարեկամական կարգավորման գործընթացի մասին.....	7
4. Դատավճռի վերլուծությունը.....	10

## Ներածություն

Մույն հետազոտությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2005 թվականի մարտի 29-ին Ուկրաինայի լրատվամիջոցների խումբն ընդդեմ Ուկրաինայի գործով կայացրած վճռի վերլուծությունն է: Գործի փաստերը վերաբերում են լրագրողի կողմից քաղաքական գործիչների զրպարտությանը և վիրավորանքին: Դիմումատուն պնդում է, որ ներպետական դատարանները սխալ վճիռն էին կայացրել՝ պահանջելով ապացուցել վիճահարույց հայտարարությունների ճշմարտացիությունը: Քանի որ այդ հայտարարություններն իրենցից ներկայացնում էին գնահատող դատողություններ, ապա դրանք ենթակա չեն ապացուցման, որը հիմնավորվում է նաև ԵԴ վճիռներով: Ուստի Դիմումատուն գտնում էր, որ խախտվել էր իր՝ որպես լրագրողի՝ տեղեկատվություն տարածելու իրավունքը: Դիմումատուն նաև պնդում էր, որ իր տարածած տեղեկատվությունը ներկայացնում էր հանրային հետաքրքրություն և որ իր նպատակն էր ոչ թե քաղաքական գործիչներին զրպարտելը, այլ քաղաքական հիմնախնդիրների մասին առողջ և բաց հանրային բանավեճի խթանումը: Այս իմաստով ինքը, որպես լրագրող, գտնվում է Կոնվենցիայի 10 հոդվածի հատուկ պաշտպանության տակ:

Վերլուծությունն ընդգրկում է գործի փաստերի ուսումնասիրությունը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Ուկրաինայի կառավարության հակափաստարկների բազմակողմանի վերլուծությունը:

Վերլուծությունն ունի ուսուցողական բնույթ և մշակվել է հիմնականում իրավաբանների, այդ թվում դատավորների, փաստաբանների, իրավաբանական այլ ծառայություններ մատուցողների, ինչպես նաև նրանց համար, ովքեր ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերում:

## Դատավճռի վերլուծությունը

Տասմերի գործի վերլուծության մեջ արդեն նշվել են գրապարտության քրեական նորմերի վերաբերյալ Եվրոպական դատարանի (այսուհետ՝ «ԵԴ») կամ «Եվրոդատարան» կողմից կիրառվող չափանիշները: Կրկնվելուց խուսափելու համար, այս վերլուծության մեջ կնշվեն միայն գրապարտության և վիրավորանքի վերաբերյալ Եվրոդատարանի վճիռների մասին՝ առանց մանրամասնելու փաստերը և կողմերի փաստարկները գնահատելիս՝ Եվրոդատարանի կողմից կիրառվող չափանիշները:

### 1. *Ջրապարտության և վիրավորանքի փաստերով ԵԴ-ի վճիռները*

Առաջին վճիռը կայացվել է Սանդի Թայմսի գործով (Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորությանը (1979) 2 EHR 245): Այս գործով ԵԴ-ն որոշեց, որ թերթի տվյալ համարի վրա դրված արգելանքը՝ մի դատավարության մասին լրատվություն տրամադրելու առնչությամբ, առաջացրել է կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Արգելանքը դրվել էր «դատարանին վիրավորելու» հիմքերով՝ ըստ Անգլիայի ներպետական օրենսդրության: Այս դրույթի կիրառումը, ըստ ԵԴ-ի, համարվել էր «ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակության համար»:

Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (1986) 8 EHR 4078) գործով ԵԴ-ն սահմանեց «թույլատրելի քննադատության սահմանները»: Ըստ ԵԴ-ի քաղաքական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են, քան սովորական անձանց, քանի որ առաջիններն իրենց կամքով իրենց յուրաքանչյուր արարքը և խոսքը մատչելի են դարձնում հանրության կողմից քննադատությանը: Այստեղից հետևում է, որ նրանք պետք է ավելի շատ հանդուրժողականություն ցուցաբերեն:

Ջրապարտության փաստերով գործերում ԵԴ-ն տարբերակում է անցկացնում փաստի և գնահատող դատողության միջև: «Փաստի առկայությունը կարելի է ցույց տալ, մինչդեռ գնահատող դատողության ճշմարտացիությունը ենթական չէ ապացուցման»:<sup>1</sup> Սա հիմք ընդունելով՝ Դատարանը սահմանեց, որ գնահատող դատողություն արտահայտելու միջոցով քաղաքական գործչին քննադատելու համար Ավստրիայի լրագրողին տուգանելը (ըստ Զրեական օրենսգրքի 111 հոդված) հանգեցրել էր կոնվենցիայի 10 հոդվածի խախտման:

Դալբանի գործով<sup>2</sup> դատավճռում Դատարանը գտավ, որ պետական բարձր պաշտոնյային գրապարտելու հիմքով ազատագրված դատապարտելը առաջացնում է 10 հոդվածի խախտում: Դատարանը սահմանեց, որ «լրագրողին չի կարելի արգելել քննադատական գնահատող դատողություններ արտահայտել լոկ այն բանի համար, որ նա չի կարող ապացուցել դրանց ճշմարտացիությունը» (կետ 49): Տվյալ գործում վիճարկելի հոդվածը վերաբերվում էր հանրորեն հայտնի անձի ոչ թե մասնավոր կյանքին, այլ նրա՝ ի պաշտոնն կատարված արարքներին: Ավելին, գործի փաստերով ակնհայտ էր, որ պատասխանող կողմը չէր ներկայացրել որևէ ապացույց, որ լրագրողի մատնանշած տեղեկությունները սխալ էին կամ անհիմն, և որ լրագրողն ուղղակի նպատակ էր հետապնդել գրապարտության արշավ սկսել հանրային պաշտոնյայի դեմ: Այս ամենը հաշվի առնելով՝ Դատարանը գտավ, որ լրագրողին դատապարտելը և ազատագրվելը համարվում է իր՝ լրագրողի արտահայտելու ազատությունը սահմանափակելու անհամաչափ միջոց:

<sup>1</sup> Տես. կետ 41

<sup>2</sup> Դալբանն ընդդեմ Ռ-ումիհիայի 28 սեպտեմբեր 1999, գեկույց 1999, կետ 49

Լուսին Գոմես Դա Սիլվան ընդունեց Պորտուգալիյի (28 սեպտեմբեր 2000) գործում գրապարտության հիմքերով դատապարտվել էր թերթի խմբագիրը: Հոդվածներից մեկում լրագրողը օգտագործել էր մի արտահայտություն՝ հանրային հետաքրքրություն ունեցող քաղաքական թեմայի համատեքստում: Դատարանը որոշեց, որ վիճարկվող հոդվածը թեև կարելի է համարել քաղաքական պոլեմիկայի ոճով գրված, սակայն դա չէր արվել անձին վիրավորելու նպատակով: Ըստ Դատարանի՝ «քաղաքական լուսանկարները հաճախ անձնականացվում են, սակայն դա քաղաքականությամբ զբաղվող անձանց և գաղափարների բաց քննարկման փտանգներից մեկն է, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակությանը»: Դատարանը համարեց, որ լրագրողին դատապարտելը այս գործում նույնպես համարվում է ոչ համաչափ միջոց:

25 հուլիսի 2001 թվականին Դատարանը որոշում ընդունեց Պեռնայի գործով, որը վերաբերվում էր դատավորին քննադատելու համար լրագրողին գրապարտելու հիմքերով պատասխանատվության ենթարկելուն: Լրագրողը խիստ ոճով քննադատել էր դատավորին՝ քաղաքական գործընթացներին հարելու համար: Նա դատավորին մեղադրել էր «մաֆիային պատկանելու մեջ»՝ առանց որևէ ապացույցի: Դատարանը այս հայտարարությունը համարեց վիրավորական: Թեև հայտարարությունը ուռճացված էր, սակայն լրագրողի կատարած ակնարկը անհրաժեշտ էր պաշտպանել: Ըստ Դատարանի՝ քաղաքականությանը հարելու դատավորի վարքագիծը հարցականի տակ է դնում նրա անկախությունը և անկողմնակալությունը, և այս իմաստով լրագրողը բարձրացրել էր շատ կարևոր հարց: Դատարանը գտավ, որ «լրատվամիջոցների դեմ պատժամիջոցները պետք է խիստ համաչափ լինեն և դրդված լինեն թույլատրելի քննադատության սահմանների անցնելու անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով նաև բոլոր այն պաշտպանության միջոցները, որը տրամադրում է 10 հոդվածը» (կետ 46): Դատարանը համարեց, որ տեղի էր ունեցել Կոնվենցիայի 10 հոդվածի խախտում՝ միայն դատավորի քաղաքական գործունեության վերաբերյալ լրագրողի կողմից արված արտահայտությունների համար նրան դատապարտելու մասով:

2001 թվականի մարտին Դատարանն ընդունեց Թունայի գործով վճիռը: Այս գործով լրագրողը դատապարտվել էր գրապարտող բնույթի հայտարարության համար, որը իրականում մեջբերում էր այլ հեղինակի հայտարարությունից: Դատավճռում Դատարանը հայտարարեց՝

*«Ընդհանուր պահանջը, որ լրագրողները պետք է պարբերաբար և ձևականորեն իրենց առանձնացնեն մեջբերումների բովանդակությունից, որոնք կարող են վիրավորել կամ վնաս հասցնել այլ անձանց հեղինակությանը, անհամատեղելի չէր ընթացիկ դեպքերի վերաբերյալ լրատվություն տրամադրելու, մտքեր և գաղափարներ արտահայտելու մասնովի դերի հետ»:*

Այս գործում լրագրողը, զգուշություն ցուցաբերելով, նշել էր, թե որտեղից է սկսվում մեջբերումը, ինչպես նաև նշել էր մեջբերման հեղինակին: Ավելին, նա գնահատել էր հոդվածը որպես «խիստ արտահայտություններով լի», ինչպես նաև հարցրել էր երրորդ կողմի՝ հոդվածի վերաբերյալ իր կարծիքը: Այս ամենը հաշի առնելով՝ Դատարանը գտավ, որ դիմումատուի դատապարտումը բավարար միջոց չէր վիճարկելի միջամտությունը արդարացնելու համար: Այս հիմքերով Դատարանը գտավ, որ տեղի էր ունեցել 10 հոդվածի խախտում:

ԵԴ-ն ընդունել է բազմաթիվ վճիռներ գրապարտության և վիրավորանքի համար լրագրողներին մեղադրելու և դատապարտելու հիմքերով: Ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ մյուս վճիռներին նույնպես, այդ թվում նաև, ինչպես նշվեց վերևում, Տամմերի գործով վճռին, որի

փաստերը վերաբերվում են լրագրողի կողմից նախկին բարձր պետական պաշտոնյային վիրավորելուն:

## **2. Պատասխանող կողմ հանդիսացող նրկրի նկարագիրը որպես ԵՍ անդամ**

Ուկրաինան հռչակեց իր անկախությունը 1990 թվականի հուլիսի 16-ին, որը հաստատվեց 1991 թվականի դեկտեմբերի 1-ի Հանրաքվեով: 1992թ. սեպտեմբերի 16-ին ԵՍ Խորհրդարանական վեհաժողովը Ուկրաինայի խորհրդարանին շնորհեց հատուկ հյուրի կարգավիճակ: 1994թ. տեղի ունեցան խորհրդարանական և նախագահական ընտրություններ: ԵՍ Խորհրդարանական վեհաժողովը ընտրություններին տվեց հետևյալ գնահատականը.

*«...Ընտրական գործընթացը իրականացվեց արդար, ընտրությունները ազատ էին և արդար, չնայած այն հանգամանքին, որ ընտրական իրավունքը անկատար էր...»*

1994 հունիսի 14-ին Ուկրաինայի և ԵՄ-ի միջև ստորագրվեց համագործակցության մասին համաձայնագիր:

ԵՍ-ին անդամակցելու համար Ուկրաինան դիմել է 1992 հուլիսի 14-ին: ԵՍ Նախարարների կոմիտեն (92) 29 Բանաձևով Խորհրդարանական վեհաժողովին խնդրեց տրամադրել կարծիք: 1995 սեպտեմբերի 26-ին Խորհրդարանական վեհաժողովը դրական կարծիք արտահայտեց Ուկրաինայի՝ ԵՍ-ին անդամակցելու վերաբերյալ: Ուկրաինան դեռ գտնվում է ԵՍ մոտիտորինգի գործընթացի տակ: ԵՍԽԼ մոնիտորինգի հանձնաժողովի համար մտահոգություն առաջացնող ոլորտներն են Սահմանադրական բարեփոխումների դանդաղ ընթացքը, լրագրողների և լրատվամիջոցների վրա պարբերաբար ճնշումները և կալանքի պայմանները: 2003թ. սեպտեմբերի 29-ին ԵՍԽԼ-ն ընդունեց 1346 Բանաձևը, որում նշվում էր, որ իշխանությունները լուրջ նահանջ են դրսևորել ազատ և բազմախոս լրատվական դաշտ ապահովելու, լրագրողական ազատությունները և ազատ խոսքի չափանիշները հարգելու հարցերում, ինչպես նաև, որ ներպետական բազմաթիվ իրավական նորմեր դեռ շարունակում են չհամապատասխանել ԵՍ պահանջներին: Այս իրավիճակը կտրուկ փոխվեց 2004 թվականին, երբ Ուկրաինան նորից շահեց միջազգային հանրության վստահությունը՝ ժողովրդավարական սկզբունքներին հետևելու հետևողականության հարցում:

## **3. Բարեկամական կարգավորման գործընթացի մասին**

Այս գործի տարբերությունը նման փաստերով այլ գործերից, ի թիվս այլոց, կայանում է նրանում, որ ԵԴ-ն չեղյալ համարեց բարեկամական կարգավորման գործընթացը, որն արդեն ընթացքի մեջ էր և որը կողմերին առաջարկել էր Դատարանը: Կարևոր է այն, որ կողմերն արդեն գրեթե հասել էին հաշտեցման, սակայն, չնայած Դատարանը մեծ մասամբ հետաքրքրված է, որպեսզի կողմերը հաշտվեն, տվյալ գործում Դատարանը որոշեց, որ որոշ կարևոր հանգամանքներից ելնելով, ավելի անհրաժեշտ էր ընդունել դատավճիռ, քան վեճի կարգավորման վերաբերյալ կողմերի հաշտեցում:

Բարեկամական կարգավորման գործընթացը, որը նախատեսված է Դատարանի կանոնակարգի 62 հոդվածով, դիմումատուին և պատասխանող պետությանը հնարավորություն է տալիս վեճը կարգավորել հաշտեցման միջոցով: Եթե կողմերը համաձայնվում են բարեկամական կարգավորմանը, ապա Դատարանը գործը հանում է Դատարանի ցուցակներից: Բարեկամական կարգավորման կարելի է հասնել վարույթի ցանկացած փուլում: Չնայած կարգավորման գործընթացի նախաձեռնողը

Դատարանն է, սակայն կարգավորման գործընթացում Դատարանը որոշում կայացնողի դեր չունի: Այն միայն կողմերին փոխանցում է միմյանց նկատառումները կարգավորման վերաբերյալ:

Երբ առաջարկվում է բարեկամական կարգավորում, կառավարությունը միջոցներ է ձեռնարկում ներպետական օրենսդրությունը փոփոխելու առումով՝ միաժամանակ դիմումատուին դրամական փոխհատուցում տրամադրելով: Օրինակ, ՁՏ-ն ընդդեմ Միացյալ Թագավորությանը գործում (դիմում համ. 26494/95), կառավարությունը ներկայացրեց հաշտեցման պայմանները, որի կետերից մեկը օրենսդրությունը փոփոխելու վերաբերյալ պարտավորությունն էր: Միաժամանակ, պետությունը դիմումատուին տրամադրեց նաև գումարային փոխհատուցում 500 ֆունտի չափով, ինչպես նաև հավելյալ գումար՝ դատական ծախսերի և ծախքերի համար:

Բարեկամական կարգավորման գործընթացը գաղտնի է, դրա մանրամասները չեն կարող տրամադրվել հանրությանը: Կողմերն իրավունք չունեն իրենց նկատառումներում ընդգրկել վեճի էության վերաբերյալ փաստարկներ: Այս մասին Դատարանը հստակորեն տեղեկացնում է կողմերին: Բանակցությունների գաղտնիությունը ապահովված է Կոնվենցիայի 38 հոդվածով:

*Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը*

*1. Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, նա՝*

*ա. նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները*

*բ. իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Կոնվենցիայով և նրա Արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա՝ հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:*

*2. 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական է:*

Ինչպես նշվեց, Դատարանը սովորաբար շահագրգռված է, որպեսզի կողմերը հաշտվեն: Սա պայմանավորված է այն համգամանքով, որ 1) Դատարանը գործում է Հավասարության սկզբունքից ելնելով, 2) դա օգնում է քչացնել հերթի մեջ գտնվող գործերի քանակը:

Սակայն, բացառիկ դեպքերում Դատարանը կարող է որոշում կայացնել կանգնեցնել բարեկամական կարգավորման գործընթացը ցանկացած փուլում, եթե դրա համար առկա է խիստ կարևոր պատճառ՝ ըստ Կոնվենցիայի 37 հոդվածի.

*1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե՛*

*ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,*

բ. վեճն արդեն կարգավորվել է,

գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա:

Տվյալ գործում Դատարանի մտահոգությունը կայանում էր նրանում, որ լրագրողական ազատությունները շարունակվում են կոպտորեն ոտնահարվել Ուկրաինայում: Ավելին, ներպետական իրավական նորմերը լրագրողական ազատության մասին չէին համապատասխանում ԵՍՎ պահանջներին: Կոնվենցիան համարվում է խախտված ոչ միայն պետական մարմինների գործողություններով, այլ նաև իրավական նորմի առկայությամբ, որը հակասում է Կոնվենցիայի նորմերին: Դատարանը բազմաթիվ անգամ հայտարարել է, որ իր համար ավելի կարևոր է ոչ թե դիմումատուի իրավունքի խախտումը արձանագրելը, այլ ներպետական իրավունքը կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելը: Եթե Դատարանը հետևողականորեն այս սկզբունքը չկիրառի, դա կհանգեցնի կոնվենցիայի արժեքների արժեզրկմանը: Կոնվենցիայի անդամ երկրները հաճախ նախնորում են իրենց բյուջեներից փոխհատուցման գումարների վճարումը՝ ներպետական օրենքներում փոփոխություններ մտցնելուց: Նման օրինակ կարելի է բերել Թուրքիայի պարագայում, որի կառավարությունը տարիներ շարունակ ձեռնպահ է մնացել իր ներպետական իրավունքում փոփոխություններ մտցնելուց, փոխարենը պարտված գործերով հետևողականորեն փոխհատուցում է վճարում դիմումատուներին: Սա հատկապես վերաբերվում է քուրդ բնակչության կողմից ներկայացրած գանգատներին:

Ըստ երևույթին տվյալ գործում Դատարանին սկսել էր անհանգստացնել ազատ խոսքի շարունակվող ոտնահարումները Ուկրաինայում: Արդեն այն փաստը, որ դատավճռում Դատարանը լայնորեն հղումներ էր կատարում միջազգային փաստաթղթերին, հաստատում է Դատարանի այս մտահոգությունը: 1346 Բանաձևում, որը վերաբերվում էր Ուկրաինայի՝ որպես ԵՍՎ անդամ երկիր իր պարտավորությունները կատարելու ընթացքի մասին, նշվում է, որ ԵՍՎ-ն «...անհանգստացած է լրագրողների նկատմամբ բռնությունների բազմաթիվ փաստերով... իշխանությունների կողմից իրենց լիազորությունների չարաշահումով... հարկային ճնշումներով և ոստիկանության կամայականություններով... կամայական վարչական որոշումներով և դատական հայցերով՝ ընդդեմ հեռուստարձևությունների և այլ լրատվամիջոցների, լրագրողների նկատմամբ բռնություններով և այլ ահաբեկող գործողություններով...» ( կետ 20): Այս ամենը բավարար էին, որպեսզի Դատարանը որոշեր, որ դատավճիռն ավելի կարևոր էր բարեկամական կարգավորման գործընթացից, որն, ինչպես միշտ, ավելի կարևորություն է ներկայացնում կողմերի համար: Ըստ 37(1) հոդվածի, Դատարանը գտավ, որ անհրաժեշտ է շարունակել այս գործի քննությունը ելնելով՝ «... կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների» նկատմամբ հարգանքից:

Այն հանգամանքը, որ վեճի կարգավորման գործընթացը կանգնեցնելու հիմք էր հանդիսանում նաև ներպետական իրավունքի անհամապատասխանությունը ԵՍՎ նորմերին, վկայում է նաև վճռի 55-րդ կետում Դատարանի արտահայտած կարծիքը, որով Դատարանը փաստորեն լայնացրեց դիմումատուի՝ իրավունքի վերաբերյալ

ներկայացրած գանգատի շրջանակները: Թեև դիմումատուի գանգատն ուղղված էր միայն ներպետական դատարանների կողմից անհարկի միջամտությանը իր իրավունքներին, Դատարանը գտավ, որ դիմումատուի գանգատը պետք է քննել «ներպետական իրավունքի և պրակտիկայի՝ կոնվենցիայի 10 հոդվածին անհամապատասխանելու» լույսի ներքո: Դատարանը հատկապես մտահոգված էր այն հանգամանքով, որ Ուկրաինայում ձևավորված պրակտիկայի համաձայն ներպետական դատարանները տարբերակում չէին անցկացնում փաստացի հայտարարության և գնահատական-դատողության միջև, որն ինքնին արդեն կարող էր պատճառ հանդիսանալ, հաշվի առնելով հարցի լրջությունը, որպեսզի Դատարանը կասեցներ հաշտեցման բանակցությունները և որոշեր, որ ավելի մեծ անհրաժեշտություն կար այս գործով քննությունը շարունակել մինչև դատավճիռ ընդունելը:

#### **4. Դատավճիռի վերլուծությունը**

Դատարանի առջև դիմումատուն պնդում էր, որ այն փաստերը, որ Ուկրաինայի ներպետական դատարանները պահանջում էին, որպեսզի դիմումատուն ընդուներ վիճահարույց հայտարարությունների անճշմարտացիությունը, որպեսզի տպագրեր հերքում և վճարեր ոչ-նյութական (բարոյական) վնասի փոխհատուցում հանգեցնում էին կոնվենցիայի 10 հոդվածի խախտման, քանի որ նշված պահանջները *նախատեսված չէին օրենքով, չէին հետապնդում իրավաչափ նպատակ և անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակության համար:*

##### *4.1. Նախատեսված էր օրենքով*

Ըստ Դատարանի նախադեպերի՝ օրենքի «որակ» հասկացության երկու անբաժան տարրերը համարվում են օրենքի «կանխորոշելիության» և «մատչելիության» սկզբունքները: Ավելի պարզ՝ որպեսզի համարվի, որ իրավական նորմը համապատասխանում է կոնվենցիային, այն պետք է կազմված լինի մատչելի և ձևակերպված լինի այնպիսի ճշգրտությամբ, որպեսզի հնարավորություն տա անձանց կարգավորել իրենց արարքները և գործողությունները այնպես, որպեսզի խուսափեն պատասխանատվությունից:

Դիմումատուն պնդում էր, որ Քաղաքացիական օրենսգրքի և Լրատվամիջոցների մասին օրենսգրքի համապատասխան դրույթները ձևակերպված չէին բավարար պարզորոշ, որպեսզի հնարավոր լիներ տարբերակում անցկացնել փաստացի հայտարարության և գնահատական-դատողության միջև: Ուստի, դիմումատուն գտնում էր, որ ինքը ի վիճակի չէր կանխորոշել, թե արդյոք իր արտահայտած քննադատական մտքերը քաղաքական գործիչների կամ հանրային դեմքերի վերաբերյալ կարող էին պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ: Դիմումատուն գտնում էր, որ եթե իր գործը լավեր Եվրոպական դատարանի կողմից, ապա Դատարանն իր նախադեպերի հիման վրա տարբերակում կանցկացներ փաստացի հայտարարության և գնահատող դատողության միջև: Ներպետական օրենքում առկա բացը թույլ չի տալիս իրեն քննադատական մտքեր արտահայտել գնահատող դատողության միջոցով, քանի որ դատարանները պահանջում են ապացուցել դրանց ճշմարտացիությունը, որը գործնականում անհնարին է: Մինչդեռ Լինգենսի գործով դատավճռում ԵԴ-ն նշել է, որ եթե փաստերի վերաբերյալ հայտարարությունը հնարավոր է ապացուցել, ապա նույնը չի կարելի ասել գնահատական դատողությունների մասին (կետ 46):

Պատասխանող կողմը ի պատասխան հղում էր կատարում մի շարք ներպետական դատավճիռների վրա, փորձելով համոզել Դատարանին, որ ներպետական օրենքները և

պրակտիկան համապատասխանում են Կոնվենցիայի նորմերին: Ավելին, պատասխանող կողմը ներկայացնում էր օրինակներ, ըստ որի ներպետական դատարանները հաջողությամբ կիրառում են Կոնվենցիայի այնպիսի սկզբունքներ, ինչպիսին «համաչափությունն է» և օգտագործված միջոցների «նպատակահարմարությունը» և «արդարացված լինելը», այսինքն՝ ներպետական դատարանները կարողանում են ըստ Կոնվենցիայի հավասարակշռել արտահայտվելու ազատության և այլ անձանց պատիվը, հարգանքն ու անունը պաշտպանելու միմյանց հետ բախվող շահերը:

Ընդհանուր առմամբ, պատասխանող կողմը ճիշտ էր վարվում՝ ներպետական պրակտիկայից օրինակներ բերելով, քանի որ Դատարանը սովորաբար հաշվի է առնում նման օրինակները՝ ներպետական պրակտիկայի մասին պատկերացում կազմելու համար: Օրինակ՝ Տամմերի գործում Դատարանը ուշադիր ուսումնասիրեց Էստոնիայի Գերագույն դատարանի վճռի տեքստը և որոշեց, որ վճիռն ըստ էության ընդունվել է՝ ամբողջությամբ հաշվի առնելով Կոնվենցիայի սկզբունքները:

Ուսումնասիրելով կողմերի ներկայացրած նկատառումները, Դատարանը գտավ, որ նույնիսկ եթե ընդունվի, որ ներպետական դատարանների վճիռները չեն համապատասխանում Կոնվենցիայի նորմերին, սակայն նույնը չի կարելի ասել «կանխատեսելիության» տեսանկյունից: Այդ որոշումները մատչելի էին դիմումատուի համար և դրանք կարդալով նա կարող էր այդ վճիռները, որպես «ուղեցույց» օգտագործելով, իր գործողություններն այնպես կարգավորել, որպեսզի քննադատական մտքեր արտահայտելիս խուսափեր պատասխանատվությունից: Ինչպես նշեց Դատարանը՝

*«...կարելի է քննադատաբար մոտենալ այն պնդումներին, ըստ որի Ուկրաինայի ներպետական դատարանների նախադեպերը կամ դրանց մի մասը, ըստ Դիմումատուի, չեն համապատասխանում Կոնվենցիայի նախադեպերին, սակայն դա չի վերաբերվում կանխորոշելիության հարցին»*

Դատարանը հատկապես նշեց այն փաստը, որ Ուկրաինայի ներպետական դատարանները բազմաթիվ վճիռներ էին կայացրել զրպարտության և վիրավորանքի գործերով, որտեղ վիճահարույց հայտարարությունները վերաբերվում էին և՛ փաստացի հայտարարություններին, և՛ գնահատող դատողություններին: Հենց այս հիմքով Դատարանը որոշեց, որ դիմումատուն իրականում իր տրամադրության տակ բազմաթիվ ուղեցույց հանդիսացող միջոցներ ուներ, որպեսզի իրազեկ լիներ, որ իր կողմից կատարված վիճահարույց արտահայտությունները կարող էին համարվել վիրավորանք և հանգեցնել պատասխանատվության:

#### 4.2. Իրավաչափ նպատակը

Դիմումատուն պնդում էր, որ իրեն պատասխանատվության ենթարկելը չէր հետապնդում որևէ իրավաչափ նպատակ՝ ըստ Կոնվենցիայի 10 հոդվածի, քանի որ ներպետական դատարանները տարբերակում չէին անցկացրել փաստացի հայտարարության և գնահատական-դատողության միջև: Բացի դրանից, քննադատական հայտարարություններն արվել էին հանրային դեմքերի վերաբերյալ և նրանց հանրային պարտականությունները կատարելու առնչությամբ, որի պարագայում նրանց անձնական կյանքը չէր դարձել քննադատության առարկա:

Դատարանը անընդունելի համարեց նման փաստարկները: Ըստ Դատարանի՝ 10 հոդվածի ներքո «այլոց հեղինակությունը և իրավունքների պաշտպանությունը» վերաբերվում է «յուրաքանչյուր անձի», որոնք հանդես են գալիս և որպես «հանրային դեմքեր» և որպես «անհատ անձինք»: Ինչ վերաբերվում է քաղաքական գործիչներին,

ապա, հղում կատարելով Օբերշլիկի գործին, Դատարանը նշեց, որ «քաղաքական գործիչներն անկասկած նույնպես իրավունք ունեն պաշտպանել իրենց հեղինակությունը, նույնիսկ եթե նա չի գործում որպես մասնավոր անձ, սակայն այդ պաշտպանվածության պահաջները պետք է հակակշռվեն քաղաքական հիմնախնդիրների շուրջ բաց քննարկումներ անցկացնելու իրավունքի շահի հետ»:<sup>3</sup> Թեև դիմումատուի պնդումներն այս լույսի ներքո անհիմն չեն և թույլատրելի քննադատության սահմանները տատանվում են քաղաքական գործի և սովորական քաղաքացու պարագաներում, սակայն դա չի փոխում այն ընդհանուր մոտեցումը, ըստ որի 10 հոդվածը վերաբերվում է «յուրաքանչյուրին»: Այս իմաստով ավելի նպատակահարմար կլինի սահմանել պաշտպանության տարբեր ոլորտներ, քանց քաղաքացիների որոշ խմբերի ընդհանրապես զրկել վերը նշված պաշտպանվածությունից:

#### 4.3. Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակություն

Ինչպես նշվեց վերևում, Դատարանն իր նախաձեռնությամբ լայնացրեց Դիմումատուի պնդումների շրջանակները, ընդգրկելով նաև այն հարցի քննությունը, թե որքանով է Ուկրաինայի ներպետական իրավունքը համապատասխանում կոնվենցիայի նորմերին:

##### 4.3.1. Ներպետական իրավունքի և պրակտիկայի ուսումնասիրությունը

Դատարանն ուշադիր ուսումնասիրեց ներպետական պրակտիկայի և օրենքների վերաբերյալ Մարդու Իրավունքների 2003թ. Զեկույցը, ԱՄՆ Պետական Դեպարտամենտի 2003 Զեկույցը և Արտկ 19 կազմակերպության ուսումնասիրությունը Ուկրաինայի Լրատվամիջոցների Ազատության մասին, ինչպես նաև ԵՆՏՎ փաստաթղթերը:

Նշված զեկույցներն ու ուսումնասիրությունները ընդհանուր տեղեկություններ են տրամադրում իշխանությունների կողմից լրագրողական ազատությունները սահմանափակելու դեպքերի վերաբերյալ: Առանձնապես մեծ թիվ էին կազմում զրպարտության հիմքերով սահմանափակումները և խախտումները պետական մարմինների կողմից՝ «անձի պատիվն ու հարգանքը արատավորելու» հիմքերով: Որպես կանոն, նման դեպքերում դատարանների վճիռները ընդգրկում էին վնասի փոխհատուցման «աստղաբաշխական» թվեր: Փաստորեն, փոխհատուցման նման անհամաչափ մոտեցումներն իշխանությունների համար բավական արդյունավետ գործիք էին անկախ լրատվամիջոցներին լռեցնելու համար: Ըստ Արտկ-19-ի ուսումնասիրության՝ «1998 թվականին լրատվամիջոցների նկատմամբ հարուցվել էր 2258 դատական գործ՝ ընդհանուր առմամբ 90 միլիոն գումարի չափով (Ուկրաինայի տարադրամով), որի 55 տոկոսը հարուցվել էր պետական պաշտոնյաների կողմից»:

Ավելին, իրավական դաշտը նպաստավոր պայմաններ էր ստեղծում ցանկացած քննադատական հոդվածի կամ լրատվության առնչությամբ դատական հայց բերելու համար: Ըստ Քաղաքացիական օրենսգրքի՝ անձի նկատմամբ ցանկացած բացասական տեղեկություն համարվում էր ոչ ճշգրիտ, քանի դեռ տեղեկատվություն տարածող անձը չէր ապացուցել հակառակը: «Բացասական տեղեկությունը» սահմանված էր «ցանկացած տեսակի քննադատություն կամ անձի նկարագրություն բացասական լույսի ներքո»: Արտկ 19-ի կողմից այս դրույթը մեկնաբանում էր որպես «իրականությունը գլխավայր շուռ տալու» փորձ, ըստ որի ցանկացած տեղեկություն, որը ճիշտ է, սակայն առաջացնում է բացասական վերաբերմունք, կարող է հեշտությամբ համարվել «բացասական տեղեկություն», որն էլ կարող էր հիմք հանդիսանալ

<sup>3</sup> Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի, ՄԻԵԴ 23 մայիս 1991: Տես նաև Օբերշլիկի գործով երկրորդ դատավճիռը, ՄԻԵԴ 1 հուլիս 1997:

լրագրողի նկատմամբ վարույթ հարուցելու համար: Ավելին, օրենսդիրն ապացուցելու ծանրությունը դրել էր այն անձի վրա, ով «տարածել էր տեղեկությունը»՝ այսինքն լրագրողի, մինչդեռ միջազգային նորմերի համաձայն դիմումատուն պետք է կրի ապացուցման ծանրությունը: Ավելին, ըստ Քաղաքացիական օրենսգրքի՝ ոչ-նյութական վնասի փոխհատուցումը պետք է կատարեր այն անձը, ով վնասել էր անձի հեղինակությունը՝ քանի դեռ այդ անձը չի ապացուցել, որ ոչ-նյութական կամ բարոյական վնասը չի հասցվել իր մեղքով: Սա նշանակում էր, որ օրենքը ապացուցման հավելյալ պարտականություն էր դնում լրագրողի վրա:

Այդուհանդերձ, Դատարանը հաշվի առավ նաև ներպետական իրավունքում որոշ նորամուծություններ, որոնք համահունչ էին Կոնվենցիայի նորմերի հետ: Օրինակ՝ գրպարտության գործերով հանրային մարմիններին թույլատրվում էր պահանջել միայն հերքում՝ նյութական փոխհատուցման պահանջի փոխարեն: Կամ, օրենսդիրը կիրառում էր «ողջամիտ հրապարակում» տեսող, որի մասին մանրամասն խոսվել է Տամմերի գործում: Ավելին, օրենսդիրը սահմանել էր, որ բարոյական վնասի փոխհատուցման պահանջ կարելի էր ներկայացնել միայն, եթե հայցվորը կարողանար ապացուցել, որ լրագրողը գործել էր ակնհայտ չարամտությամբ: Սակայն նշված փոփոխությունները մեծ մասամբ կոսմետիկ բնույթ էին կրում և պրակտիկայում հազվադեպ էին կիրառվում: Դա բացատրվում էր քաղաքական կամքի բացակայությամբ:

Վերը նշվածից կարելի է գալ հետևյալ եզրակացության՝ Ուկրաինայի ներպետական օրենքները տարբերակում չէին անցկացնում փաստացի հայտարարության և գնահատող դատողության միջև: Հենց սա էր այս գործով վեճի հիմնական առանցքը: Ինչպես նշում է Դատարանը 59 կետում. «Ուկրաինայի գրպարտության մասին օրենքը... տարածվում էր միայն փաստացի հայտարարության վրա... և բխում էր այն համոզմունքից, որ քաղաքացիական բնույթի ցանկացած գործում ցանկացած հայտարարություն ենթակա էր ապացուցման...»: Նույնը հաստատվում էր նաև Քաղաքացիական օրենսգրքի 277(3) հոդվածով, որում նշվում էր, որ «անձի մասին տարածած ցանկացած բացասական տեղեկություն պետք է համարվի ոչ ճշգրիտ»: Այսպիսով, «ցանկացած հայտարարություն» արտահայտությունը վերաբերվում էր և՛ փաստացի հայտարարություններին, և՛ գնահատող դատողություններին՝ մինչդեռ երկու տեսակի հայտարարություններն էլ պաշտպանվում է 10 հոդվածով:

Ներպետական իրավունքի՝ Կոնվենցիային համապատասխանելու վերաբերյալ Դատարանի և պատասխանող պետության միջև վեճը հասավ իր հանգուցալուծմանը դատավճռի 61 կետում: Ի պատասխան պատասխանող կողմի բազմաթիվ հղումներին ներպետական դատավճիռներին՝ մասնավորապես, որ Ուկրաինայի դատարանները արգելում էին բարոյական վնասի հիմքերով հայցապահանջները, Դատարանը ընդունեց, որ դա իրավամբ արտացոլում է դրական զարգացում ներպետական պրակտիկայում: Սակայն, Դատարանը միևնույն ժամանակ նշված առաջընթացը գնահատեց գոյություն ունեցող իրավական նորմերի համատեքստում, գտնելով, որ դրանք խիստ սահմանափակող բնույթ ունեն և լրագրողների համար դեռ պոտենցիալ վտանգ են ներկայացնում: Նման նորմերի առկայության պարագայում՝ նույնիսկ ներպետական դատարանների որոշումներում դրական տեղաշարժերի առկայության պարագայում, դրանք խանգարում են դատարաններին փաստացի հայտարարության և գնահատող դատողության միջև տարբերակում անցկացնել: Ինչպես նշեց Դատարանը՝

“... ներպետական իրավունքը տրամադրում է մի կանխավարկած, ըստ որի հանրային պաշտոնյայի պատվի, արժանապատվության և հեղինակության պաշտպանությունը գերակշռում է նրան բաց կերպով քննադատելու հնարավորությանը (կետ 62):

Վերը նշվածի հիման վրա Դատարանը որոշեց, որ ներպետական իրավունքը ընգրկում էր այնպիսի նորմեր, որոնք կիրառելի ուղեքում կկայացվեին այնպիսի որոշումներ, որոնք կհակասեին Կոնվենցիայի 10 հոդվածին (կետ 62):

#### *4.3.2. Փաստերի վերլուծությունը*

Դատարանը քննության առավ երկու վիճահարույց հայտարարությունների բովանդակությունը և գտավ, որ ներպետական դատարանները սխալ որոշում էին ընդունել՝ գտնելով, որ նշված հոդվածներն անհամատեղելի էին Կոնվենցիայի 10 հոդվածի սկզբունքների հետ: Այս որոշումը կայացնելիս Դատարանը հիմնվեց հետևյալ սկզբունքների վրա.

#### *Հանրային բանավեճի ազատությունը*

Երկու հոդվածներն էլ վերաբերվում էին պարոն Պետրո Սիմոնենկոյի և տիկին Նատալյա Վիտրենկոյի մասնագիտական գործունեությանը: Սա ակնհայտ է դառնում նույնիսկ հոդվածների բովանդակության հետ ծանոթանալիս: Նշանակում է, ներպետական դատարանները սխալ եզրակացության էին հանգել, որոշելով, որ հոդվածները վերաբերվում էին նաև նրանց անձնական կյանքին: Սրանով հոդվածագրերն հայտվում են 10 հոդվածի ավելի լայն պաշտպանության տակ: Քաղաքական գործիչների նկատմամբ թուլատրելի քննադատության սահմաններն ավելի լայն են, քան սովորական քաղաքացիների՝ հատկապես, եթե քննադատությունը վերաբերվում է նրանց մասնագիտական գործունեությանը: Սա հանգեցնում է հանրային բանավեճի ազատության գաղափարին: Եթե տեղեկությունը կամ գաղափարները վերաբերվում են հանրային բանավեճ հրահրելու ազատությանը, ապա դրանք 10 հոդվածի ավելի լայն պաշտպանության տակ են հայտնվում: Դրա մասին Դատարանը հայտարարել է բազմաթիվ վճիռներում: Ավելին, վիճահարույց հայտարարությունները հրապարակվել էին նախագահական ընտրություններից առաջ, որտեղ երկու անձինք էլ համարվում էին նախագահի թեկնածուներ: Հոդվածներում արծարծվում էր այն միտքը, որ Ուկրաինայի նախագահ Լ. Կուչման գաղտնի համաձայնության էր եկել նշված երկու թեկնածուների հետ ընտրությունների ընթացքում հասարակությանը ապակողմնորոշելու համար: Այս առումով, հոդվածներում նշված տեղեկությունները ներկայացնում էին հասարակական հետաքրքրություն: Ինչպես նշվել է Օբերշլիկի գործով դատավճռում, քաղաքական գործիչը նույնպես իրավունք ունի իր հեղինակությունը պաշտպանել, նույնիսկ եթե չի գործում որպես մասնավոր անձ, սակայն այդ պաշտպանվածությունը պետք է հակակշռել քաղաքական հարցերի վերաբերյալ բաց հասարակական քննարկումների նշանակության հետ: Այստեղից հետևում է, որ երկու կարևոր գործոններ վճռորոշ նշանակություն ունեցան, թե 10 հոդվածի ինչ ծավալով պաշտպանության տակ հայտնվեցին վիճահարույց հոդվածները՝ 1) քննադատությունն ուղղված էր մասնագիտական գործունեությանը և ոչ թե անձնական կյանքին 2) հոդվածները ներկայացնում էին հասարակական հետաքրքրություն:

Կարևոր էր նաև լրագրողի դիրքորոշումը, ըստ որի ինքը գործում էր ոչ թե չարամտորեն, այլ փորձում էր հրահրել հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ առողջ հանրային բանավեճ:

#### *Քննադատական և հարձակողական բնույթի խոսքի պաշտպանությունը*

10 հոդվածը պաշտպանում է բոլոր տեսակի տեղեկությունները և արտահայտվելու միջոցները: Արտահայտվելու և տեղեկություններ ու գաղափարներ տարածելու ազատությունը տարածվում է ոչ միայն բարյացակամորեն ընդունվող

«տեղեկությունների» և «գաղափարների» վրա, այլ նաև այնպիսի տեղեկությունների և գաղափարների վրա, որոնք, ցնցում և անհանգստացում են պետությանը կամ հանրության որևէ խմբի»: Սա նշանակում է, որ 10 հոդվածը պետք է մեկնաբանվի այնպես, ըստ որի տեղեկատվության ազատությունը գտնվում է բարձր պաշտպանվածության տակ, նույնիսկ եթե նման տեղեկատվությունը վնասակար է պետությանը կամ որոշ խմբերին, ձեռնարկություններին, կազմակերպություններին և հանրային դեմքերին, ինչպես օրինակ՝ քաղաքական գործիչներին և նույնիսկ դատավորներին:

Տվյալ գործում Դատարանն ընդունեց, որ հոդվածները գրված էին ծաղրական ոճով և որ դա կարող էր դիմումատուներին վիրավորել և նույնիսկ ցնցել: Սակայն, ինչպես նշվեց, նման խոսքը նույնպես պաշտպանված է 10 հոդվածով: Սակայն այս արտահայտությունը չպետք է ընդունվի իր նեղ իմաստով և վիճահարույց հայտարարությունները պետք է գնահատվեն հանրային բանավեճի ազատության և փաստացի հայտարարության ու գնահատող դատողության միջև տարբերակում անցկացնելու համատեքստում:

Փաստացի հայտարարություն և գնահատող դատողություն

Ըստ Արտիկլ 19 կազմակերպության՝ Ջրպարտության Սահմանումը հետազոտության 10 սկզբունքի<sup>4</sup>, արտահայտված կարծիքը կարելի է սահմանել որպես հայտարարություն, եթե

1. պարունակում է ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր լինի ապացուցել, կամ
2. չի կարելի ողջամտության սահմաններում մեկնաբանել, որ տվյալ կարծիքը փաստերի վերաբերյալ հայտարարություն է՝ նկատի ունենալով նաև հայտարարության լեզվական կողմը (հռետորական ոճը, չափազանցություն, երգիծանք կամ ծեստ)

Ի հավելումն, ինչպես արդեն նշվել է, Դատարանը խախտում է համարում, երբ ներպետական դատարանները պահանջում են ապացուցել արտահայտված կարծիքի՝ գնահատող դատողության ճշմարտացիությունը: Տվյալ գործում ներպետական դատարանը պահանջել էր ապացուցել հոդվածի վերնագրի (*Սուրբ կովը*) ճշմարտացիությունը: Այս ամենը չնայած այն բանի, որ ներպետական դատարանները ընդունել էին, որ վերնագիրն իր բնույթով գնահատող դատողություն էր: Սակայն, այնուամենայնիվ, լրագրողին պահանջել էին ապացուցել դրա ճշմարտացիությունը, որը գործնականում անհնարին է: Ինչպես նշեց Դատարանը, վիճահարույց հայտարարություններն արվել էին «քաղաքական հռետորականություն ոճով, որը ենթակա չէ ապացուցման (կետ 66):

Քաղաքական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատություն  
ավելի լայն աստիճան

Դատարանը բազմաթիվ նախադեպեր ունի, ըստ որոնց հանրային դեմքերը պետք է ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերեն իրենց նկատմամբ քննադատական խոսքի հանդեպ: Ավելին, եթե գործի փաստերը վերաբերվում են լրագրողական ազատությանը և ազատ խոսքին, ապա սահմանափակումները պետք է նեղ կիրառվեն: Սա նշանակում է, որ պետության վրա դրված է ապացուցման մեծ բեռ՝

<sup>4</sup> Ջրպարտության Մեկնաբանումը, Արտահայտվելու ազատության և Հեղինակության պաշտպանության սկզբունքները: Արտիկլ 19, հուլիս 2000

սահմանափակումների ծայրահեղ անհրաժեշտությունը Դատարանին համոզելու համար: Ե՛ն նախադեպերը տալիս են մի քանի պատճառներ նման մոտեցման հիմնավորման համար: Առաջինը, ինչպես արդեն նշվեց, դա այն է, որ քաղաքական գործիչները կամովին իրենց յուրաքանչյուր խոսքը և արարքը ի ցույց են դնում հանրությանը և լրագրողներին (տես Լինգենսի գործով դատավճռի 42 կետը): Քաղաքական գործիչը կարող է նաև օգտագործել իր «ամբիոնը» ցանկացած քննադատությանը էլ ավելի սուր քննադատությամբ պատասխանելու համար: Համեմատության համար պետք է նշել, որ դատավորները չունեն նույն հնարավորությունը:

Որպես այլ գործոններ, Դատարանը նշում է նաև կառավարության գերիշխող դիրքը «...որն անհրաժեշտ է դարձնում, որպեսզի այն ցուցաբերի զսպվածություն»:<sup>5</sup> ինչպես նաև այն հանգամանքը, որ «...պետական մարմինների մոտ ցանկացած քննադատության վերաբերյալ բաց է մնում միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը»:<sup>6</sup> Պետական պաշտոնյաներն ունեն դիրք և լծակներ, որը հաջողությամբ օգտագործում են, օրինակ, դատաքննության ընթացքում: Ավելին, պետական պաշտոնյաների հեղինակությունը պաշտպանելիս դատարանի կողմից օգտագործվում են ավելի բարձր չափանիշներ և կիրառվում ավելի խիստ պատժաչափեր մեղադրյալների նկատմամբ:<sup>7</sup>

Տվյալ գործում Դատարանը նշեց, որ վիճահարույց հայտարարություններն իրավամբ կարող էին հեղինակագրել կամ վիրավորել հայցվորներին, սակայն միևնույն ժամանակ հայտարարեց, որ «իրենց մասնագիտությունն ընտրելիս, իրենք կամովին իրենց անձերը դրեցին հանրային քննադատության և վերահսկողության առջև. սա այն բեռն է, որ քաղաքական գործիչները պետք է ընդունեն ժողովրդավարական հասարակությունում»: (կետ 67):

Հայեցողության ոլորտը

Դատարանն իր նախադեպերով սահմանել է, որ միջամտության անհրաժեշտությունը որոշելիս ներպետական դատարանները օժտված են հայեցողության իրավունքով, որը սակայն վերահսկվում է Եվրոպական դատարանի կողմից: Եթե գործի փաստերը վերաբերվում են գրպարտության և վիրավորանքի հիմքերով լրագրողական ազատության սահմանափակմանը, ապա ազգային մարմիններին տրված հայեցողության իրավունքը նեղ է, և ընդհակառակը՝ Դատարանի վերահսկողության շրջանակները լայն:

Տվյալ գործում Դատարանը որոշեց, որ Ուկրաինայի ներպետական դատարաններն անցել էին իրենց հայեցողության թույլատրելի սահմանները՝ լրագրողի ազատությանը միջամտելու անհրաժեշտությունը գնահատելիս կիրառվել էր միջամտության ոչ համաչափ միջոցներ հետապնդող իրավաչափ նպատակի համեմատ: Մասնավորապես, լրագրողի 10 հոդվածով տրված իրավունքները խախտվել էին, երբ ազգային դատարանները պահանջել էին ա) հերքել վիճահարույց հայտարարությունները, բ) վճարել բարոյական փոխատուցում:

<sup>5</sup> Կաստելան ընդդեմ Իսպանիայի, ապրիլ 23, 1992, Շարք Ա, հատ. 236, կետ 46

<sup>6</sup> Նույն տեղը

<sup>7</sup> “Defining Defamation”, ARTICLE 19, Լոնդոն, ISBN 1 902598 25 3, հուլիս 2000 Տես: <http://www.article19.org/docimages/714.htm>